

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԵՐԱՊԱՏԻ Տ. ՄԵՂՐԻԿ Ծ. ՎՐԴ. ԲԱՐԻՔԵԱՆ

ՀՈԳԵՒՈՐ ՏԵՍՈՒԶ

ՕՆԹԱՐԻՈ ՆԱԶԱՆԳԻ

Ազգային Վարչութեանս ժողովներուն քանիցս արծարծուեցաւ կարեւորութիւնը Օնթարիոյի Նահանգին մէջ ունենալու շրջանի եկեղեցական կեանքին վերահսկող Հոգեւոր Տեսուչ մը, որ արդէն իսկ գոյութիւն ունեցող ու գործող եկեղեցիներուն, ինչպէս նաեւ նոր կազմաւորուող գաղութներուն եկեղեցական կեանքին աւելի մօտէն հետեւի ու անոնց կազմակերպման եւ բարօր գործունեութեան բերէ իր նպաստը:

Այս կապակցութեամբ պատշաճ դատեցինք Օնթարիո Նահանգի եկեղեցական կեանքի Հոգեւոր Տեսչութեան հրաւիրել Գերապատիւ Տ. Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեանը:

Հայր Սուրբին առաքելութիւնը պիտի ըլլայ քննարկել շրջաններուն եկեղեցական կեանքի իրավիճակը, ուսումնասիրել եկեղեցական կեանքը կազմակերպելու կարելիութիւնները, կատարել ախտաճանաչումները գոյութիւն ունեցող դժուարութիւններուն եւ Ազգային Վարչութեանս ժողովին ներկայացնել դատումներն ու առաջարկները:

Ծանօթ ըլլալով Հայր Սուրբին անհուն նուիրուածութեան եւ Աստուածապարգէւ բազում կարողութիւններուն, կը հաւատանք որ Գանատայի Հայոց Թեմին եւ յատկապէս Օնթարիոյի հայութեան ապագային առողջ զարգացումին համար կենսական այս առաքելութիւնը եւս պիտի կատարէ գերազանցօրէն, ի փառս Աստուծոյ եւ ի պայծառութիւն մեր Սուրբ եկեղեցւոյ ու Կիլիկեան նուիրական Աթոռին:

Դիւան Ազգային Առաջնորդարանի